



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

✓ 409

Մ. ԲՈՆԴԱՐԵՆԿՈ

1-2 870

ԱՍՍԱՎԱՇՎԻ, ԽՈՐԱՎԻՆ ՅԵՎ ԱՀԱՏԱՎԻ  
ԱԳԻՏԱՎԻՆ ՁԵՒՆՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ


23544

H

М. БОНДАРЕНКО

ассовая, групповая и индивидуаль-  
ная агитация на предприниматель-

Партизат 1933 Эривань



ԿՈՒՄԱԿՑՈՒՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Համեմատ. քննագրի հետ Վ. Թեղեկիրաօյան  
Մրագրի Լ. Արովյան  
Համձնված և առաջդրության 25 հուլիսի 1933 թ.  
Սուրագրված և սպազրելու 27 հուլիսի 1933 թ.  
Գլանվիս 7761 (թ). Հրատ. № 127.  
Պատճեն № 14. Տիրած 1000.

---

Կարօնական սպառան. Ծերեկան. 44,000 տպ. 60.

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ, ԽՄԲԱԿԱՅԻՆ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ  
ԱԳԻՏԱՑԻԱՆ ԶԵՐՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Դեռևս 1929 թվին, առաջին 5-ամյակի սկզբին, Համեր (բ)կ կենտկոմը «Բանվորների մեջ ազիտացիայի դրվածքի մասին» իր վորոշման մեջ ընդգծեց բայլշելիյան ազիտացիայի բացառիկ դերը սոցիալիզմ կառուցելու համար մղվող պայքարում:

«Քաղաքական ազիտացիան,—ասված ե այդ վորոշման մեջ,—պետք ե մոբիլիզացիայի յենթարկի բանվոր դասակարգի ամենալայն մասսաները՝ ակտիվ և դիտակից կերպով մասնակից դարձնելու համար սցիալիստական շինարարությանը, պետք ե մասսաների եներգիան ուղղի դեպի այդ շինարարության դժվարությունների հաղթահարումը։ Նա պետք ե զարգացնի սրբության հասկանալ անցողիկ շրջանի դասակարգային պայքարի առանձնահատուկ ձեերը նրանց կոնկրետ արտահայտության մեջ, ցույց տա դասակարգային թշնամու դեմքը, սովորեցնի պայքարել վոչ-պոլիտարական ազդեցության դեմ բանվոր դասակարգի ներսում։»

Տվյալ ետապում, յերբ բանվոր դասակարգը, կուսակցության դեկավարությամբ, փայլուն կերպով ավարտեց առաջին 5-ամյակը և անցավ յերկրորդ 5-ամյակի վիթխարի պլանի իրականացմանը, բայլեվիկյան ազիտացիայի նշանակությունը յեվ դերն անում են յեվ նաևնում նսկայական չափերի, կու-

սակցության բաղամական ազիտացիան մասաներում .  
ձեռք է բերում առաջնակարգ յել կարեվոր խնդրի  
նշանակություն:

Անդադար բարձրացնել բանվորական մասսաների  
և բոլոր աշխատավորների գասակարգային գիտակցու-  
թյունը մինչև յերկրորդ համբակի վիթխարի խնդիր-  
ների ըմբռնման մակարդակը, մոքիլիզացիայի յեն-  
թարկելով և կազմակերպելով մտսաներն այն հերո-  
սական աղայքարի շուրջը, վոր մղվում և պրոլետարա-  
կան դիկտատուրան ամրացնելու համար, խորթ տրա-  
մադրությունների դեմ, վորոնք թափանցում են բան-  
վոր դասակարգի միջավայրը, բանվորների լայն մաս-  
սաների մեջ դաստիարակել սոցիալիստական վերա-  
բերմունք դեպի աշխատանքը, յուրաքանչյուր բանվո-  
րի դարձնել հմուտ իր աշխատանքին, լիովին տիրա-  
պետող տեխնիկային, ամբողջ մասսայով դիմակազերծ  
անել և խփել լողին, պոկողին, պրոդուկտիկին, — անա-  
պահումն ե կայանում նորը, սա յէ բաղամական ա-  
զիտացիան մտսաներում դարձնում կուսակցության  
ամենակարեվոր, հիմնական խնդիրներից մեկը ներ-  
կա ըջանում:

Մեր կուսակցությունը մեծ հաջողությունների յէ  
հասել կուսմասսայական ամբողջ աշխատանքի վերա-  
կառուցման ասպարեզում, նրա ծանրության կենարո-  
ւուսուրին ողակները փոխադրելու գործում (ցեխ,  
բրիգադ, ազրեգատ, խումբ), մեծ հաջողությունների  
յէ հասել յուրաքանչյուր բանվորի քաղաքական-քայլ-  
շիվիկյան ազդեցությամբ ընդգրկելու գործում:

Այս տեսակետից մեծ հաջողությունների յեն հա-  
սել անդրկովկայան կազմակերպությունները:

Համեր (բ)կ Մոսկվայի քաղաքային կոմիտեյի պլե-  
նումը (1933 թ. մայիս), ուր հանդես յեկավ ընկեր

Կաղանովիչը, տվեց սպառիչ դրույթներ մասսաներում ազիտացիան ծավալելու դործում:

«Ազիտացիոն ամբողջ աշխատանքը կուսակցության հիմնական քաղաքական հարցերի և ընթացիկ խնդիրների ու միջոցառութենքը շուրջը անհրաժեշտ և կառուցել՝ յենելով բանվորների կուլտուր-քաղաքական և նյութական-կենցաղային պահանջների հաշվառումից՝ պատասխանելով նրանց հետաքրքրող հարցերին։ Ազիտացիոն աշխատանքի դրվաժքի մեջ գրխավոր բանը կայանում և ուղղակի, ըմբռնելի բացարության և համոզման մեջ բանվորի պիտեցածի հիման վրա, թե լայն միտիզմներում և թե՛ զրույցների, թերթերի ընթերցման և այլնի միջոցով՝ բանվորների խմբերի և տռանձին բանվորների ու բանվորուհիների հետ, զնելով և պատասխանելով զանազան սուր հարցերի և դիմակազերծ անելով թշնամու յելույթները»։

\* \* \*

Ազիտացիան աշխատանքի պրակտիկայում մշակված են նրա յերեք հիմնական տեսակները—ա) մասսայական ազիտացիա, բ) խմբական ազիտացիա և գ) անհատական ազիտացիա։

Կանգ առնենի մասսայական ազիտացիայի հարցի վրա: Համ կ (բ) կ կենտկոմն իր 1929 թ. մարտի 29-ի վորոշման մեջ—«Ազիտացիայի դրվածքը բանվորության մեջ»—վորոշեց.

«Լեռականգնել կանոնավոր (տիրու 1—2 անգամ) միտինգների պրակտիկան ձեռնարկություններում կոնկրետ հարցերի շուրջ (խուռագույններում ըստ ցեխերի) . . . և հետո՝ «Պարտադրել տեղական կուսակցական կազմակերպություններին՝ սահմանել վորոշութարփա մեջ՝ մասսայական բանվորական ժո-

դովիճերի համար (միտինգներ, հարց ու պատասխանի յերեկոներ ակումբներում և այլն) ղեկավար կուսաշ-խառակիցների մասնակցությամբ»:

Համեր(ը)կ կե այս վորոշումը դեռ այսոր ել պահ-պահում ե իր ամբողջ ուժը և այժմեականությունը:

Միտինգների, բանվորական լայն ժողովների անց-կացումը խիստ կերպով սահմանված որացուցային որերին՝ հանդիսանում ե մասսայական ազիտացիայի կարևորագույն ձևու:

Մինչդեռ հենց այստեղ մենք ունենք բավակա-նաշափ բացեր, հենց այստեղ տեղի ունի վորոշ թե-րազմահատում: Վերջին մեկ-մեկուկես տարին Բագվի, Թիֆլիսի: և մի ամբողջ շարք գյուղական կազմակեր-պություններ հասել են նշանակելի հաջողությունների միամնական կուսուրը կազմակերպված կերպով տանե-լու մեջ: Վորոշ աեղեր (մանավանդ Թիֆլիսում) մի-ամնական խորհրդային որվա անցկացման շատ դրա-կան պրակտիկա կա: Անպայմանորեն դրական և բաղր-մերի անցկացման փորձը, վոր լայն կերպով փոխա-դրված և Բագվի և Թիֆլիսի կազմակերպություն-ներից գյուղական շրջանները և կոլտնտեսությունները:

Դրա հետ միասին պետք ե ամբողջ վճռականու-թյամբ ընդգծել վորոշ իմաստով «կամպանիական» մոտեցման առկայությունը՝ մասսայական ազիտա-ցիայի գանագան ձևերի կիրառման մեջ:

Փաստ ե, վոր Բագվի, Թիֆլիսի, Յերևանի և ու-րիշ մի շարք Քաբըիկա-գործարանային կուսկազմա-կերպություններ վերջին ժամանակները, որինակ նկատելի կերպով վատ են զբաղվում քաղորերով: Ճիշտ ե, դեռևս վերջերս Բագուն վատ չեր կազմա-կերպված, և մի շարք ձեռնարկություններում շատ լավ անց եր կացվում քաղորը՝ միջազգային հարցերի

շուրջը ծիշտ ե, Թիֆլիսի մի շարք կազմակերպություններ վատ չեյին կազմակերպում և անցկացնում բաղորերը: Սակայն նման գրություն մենք ունենք, դժբախտաբար, վոչ ամենուրեք: Առհասարակ անցկացվող քաղորերի քանակը շարունակ աճում ե, բայց քաղորերի նախապատրաստության մակարդակը զեկուցողների ~ պատասխանողների մակարդակը շատ դեպքերում նկատելի կերպով իջել ե: Յեվ վոչ մի զարմանալի բան չկա նրանում, վոր գրա շնորհիվ մի շարք ձեռնարկություններում բանվորներն սկսել են քաղորերին վերաբերվել ավելի պակաս հետաքրքրությամբ, քան առաջ:

Առաջ, քաղորեր անցկացնելիս, սովորաբար իբրև ղեկուցողներ հանգես եյին գալիս ամենախոշոր կուսակցական, խորհրդային, տնտեսական, գիտական, դրական, բժշկական և այլ աշխատողներ: Իսկ հետո, հետզհետե, հիմնական ղեկավար աշխատողների փոխարեն իրեն պատասխանողներ սկսեցին ավելի ու ավելի հաճախակի ուղարկել պակաս վորակով, անբավարար պատրաստված ընկերներ:

Այստեղ, անպայման, յերևան յեկավ «կամպանիական» մոտեցում աշխատանքին: Մկզբում գործին կազման տաք կերպով, իսկ հետո սկսեցին քիչ զբաղվել դրանով, վերջապես քաղորերը դարձրին սովորական, հաճախ լավ չպատրաստված ժողովներ:

Այնինչ, Համեկ(բ)կ կենտկոմն արգեն վերև բերված էր վորոշմամբ պահանջում ե—«Կուսկագմակերպությունների ղեկավար աշխատողներին ներգրավել սիսեմատիկ մասնակցության մասսայական ազիտացիային (յերւլյբներ միտինգներին, հարց ու պատասխանի յերեկոների անցկացում, գրույցներ ցեխերում, ակումբներում, գորանոցներում, հանրակացա-

բանիներում, բանվորական ավանեներում, գյուղերում՝ այսինքն ապրող բանվորների կումպակտ մասնակցությամբ): Պատասխանառու կուսակցական աշխատողների այդ յելույթիները համարել կուսակցական կարևորագույն և առաջնակարգ խնդիրներ»:

Պետք ե ուղղակի ասել, վոր Համել(բ)կ կենտկոմի այս դիրեկտիվը և Անդրյերկոմի դիրեկտիվը ժողկոմատների, գերատեսչությունների և այլն դեկազարների հաշվետվությունների մասին բանվորական: Ժողովներում, առհասարակ, Անդրկովկասի կաղմակերպությունների մեծ մասը լսով չի կատարում:

Կամ թե վերցնենք միտինգները, առհասարակ, կիրառվում են շատ հազվադեպ, այն ել առանձին դեպքերում, վորեւ արտասովոր իրադրության առթիվ:

Իհարկե, այս դեպքերում ամենալավ ձեր հանդիսանում ե միտինգը: Բողոքի միտինգներ ֆաշիստական տերրորի դեմ, դասակարգային թշնամու վորեւ յելույթի դեմ, միտինգներ՝ նվիրված վորեւ պատմական տարեդարձի, հոբելյանի, նորակառույցի բացման, նոր արտադրության յուրացման և այն՝ խաղում են քաղաքական և դաստիարակչական հսկայական դեր:

Սակայն այնպիսի միտինգները, վոր կոչված են միանգամից և արագ կերպով վոտքի հանելու բանվորների մեծ մասսա, սքանչելի, անփոխարինելի ձեւ են հանդիսանում նաև մի ամբողջ շարք ուրիշ դեպքերում:

Սրան փայլուն ապացույց կարող են հանդիսանալ Բագվում, Թիֆլիսում, Եերկանում և Անդրկովկասի այլ քաղաքներում ու շրջաններում անցկացված միտինգները՝ յերկրորդ ճամայակի փոխառության իրացման կամպանիայի կապակցությամբ:

Համբահայց են փոչ սակավ որինակներ, յերք  
աշխատանքից կես ժամ նետ նրավիրված միտինգնե-  
րը բռակի, որական արտադրական առաջադրանքի  
կատարման, ինքնարժեքի իջեցման հարցերի մասին,  
Տեխնիկայի տրապեզման, աշխատանքային կարգա-  
պահության, արդՅինպլանի, հանդիպական պլանա-  
վորման, սոցմեցման պայմանագրի կատարման յեզ  
այլ խնդիրների մասին՝ ուս համախ ուժեղ յեզ նան-  
կարծական բեկում են առաջացրել պլանների կա-  
տարման, այս կամ այն նեղէվածքը լիկվիդացիայի  
յենթարկելու մեջ:

Այսինչ միտինգները, վորպես մասսայական ագի-  
տացիայի խիստ կարևոր ձեւ, ամբողջ շարք կազմա-  
կերպությունների կողմից չեն կիրաւում:

Վերցնենք մի այնպիսի հարց, ինչպիսին ե բան-  
վորական ժողովների անցկացումը:

Ցեթե կուսորգա կազմակերպման, նախապատ-  
րաստման և անցկացման նկատմամբ մենք հասել ենք  
արդեն նկատելի հաջողությունների, ապա բանվորա-  
կան ժողովների անցկացման նկատմամբ մենք դեռ  
խիստ հետ ենք մնում:

Սովորաբար բանվորական ժողովները հրավիր-  
վում են շատ հաճախակի, յերբեմն այնպիսի հարցերի  
շուրջը, վորոնք կարող են լուծվել առանց ժողով  
հրավիրելու։ Բանվորական ժողովների հաճախակի  
հրավիրումը հնարավորություն չի տալիս ուշի-ուշով  
նախապատրաստվել նրանց համար։ Նման ժողովներում  
հարցերը սովորաբար դրվում են հապճեպ, անմտած-  
ված կերպով։ Սովորաբար նման ժողովների վորոշում-  
ները եւ կոնկրետ չեն լինում, պարունակում են ընդ-  
հանուր ֆրազներ և այլն։

Բայց, վոր առանձնապես կարևոր ե, այդպիսի

հաճախ անցկացվող բանվորական ժողովներում բանվորների կողմից տրված հարցերը լուծումն չեն ստանում, ընդունված վորոշումները, շնորհիվ իրենց վոչկոնկրետության, վրիպում են կատարման ստուգումից և այլն:

Նման ժողովների հետևանքը լինում է անտարբեր վերաբերմունք դեպի այդ ժողովները: Ծնորհիվ դրան, հաճախ ժողովներին վատ են հաճախում, ներկաները ձանձրանում են նստելով յերկար ժամեր և չտեսնելով առանձին կարիք նման ժողովի:

Պետք է դրան վերջ տալ: Պետք է սահմանել խիստ որացույց, թույլ չտալ, վոր ամեն վոք, տեղից վեր կացողը ամեն մի առիթով ժողով հրավիրի և ժամերով, հաճախ ամենադատարկ խոսակցություններով բանվորներին պահի ժողովի: Առհասարակ բանվորական ժողովները պետք է անցկացնել վոչ հաճախ, սակայն մանրակրկիտ կերպով նրանց նախապատրաստելով, ժողովը դարձնելով կարեվոր յեզ նետարքիր:

Բանվորական ժողովների նախապատրաստմանը պետք է ակտիվ մասնակցեն վոչ միայն կուսակցական կոմիտեն, կուսկոլեկտիվը, այլև կոմյերիտական բջիջը, և ֆարգործականը, և հասարակական կազմակերպությունները, և ձեռնարկությունների կամ հիմնարկների ղեկավարները:

Պատրաստվող մասսայական բանվորական ժողովների հարցերը, ժողովի թեմային համապատասխան, պետք է ուշի-ուշով հավաքվեն անհատական և խմբակային ագիտատորների, պրոֆլիազգորների, կոմյերիտականների և այլոց կողմից, իսկ ժողովում դրված հարցերը պետք է ստանան անպայման յեզ կոնկրետ լուծում:

Այս բոլորն ամբողջությամբ վերաբերում է նաև արտադրական խորհրդակցությունների աշխատանքին և մասսայական աշխատանքի այլ ձևերին:

Խնդիրն այն է, վոր պետք ե միտինգներ, քաղորեր և մասսայական բանվորական ժողովներ անցկացնելով համնելով համնել մեծագույն եֆֆեկտի: Դրան կարելի յե համնել գոնե չորս պայման նկատի առնելով.

ա) խիս կրնատել յեվ պլանայնությունն մտցնել ժողովների, միտինգների, քաղորերի անցկացման մեջ.

բ) յուրաքանչյուր ժողովի, քաղորի մանրակրկիս, խորը, բազմակողմանի նախապատրաստություն.

գ) կուտկաղմակերպությունների ամենախոշոր դեկավար աշխատողներից ջոկել բարձրորակ զեկուցողներ.

դ) պարտադիր կերպով կատարել յուրաքանչյուր միտինգի, ժողովի յեվ քաղորի փորումները:

Ինարկե, մասսայական ագիտացիայի անցկացումը բոլորովին չի սպառվում հիշյալ ձևերով:

Այսուեղ բերված են դրանցից միայն հիմնականները: Խնդիրն այն չե, վոր պետք ե անվերջ փոխել ձևերը, փնտուել և ընարել շարունակ նորանոր ձևեր, յերբեմն աչքաթող անելով անհաջող կերպով ոգտագործված այնպիսի ձևեր, ինչպես միտինգներն են, քաղորերը և այլն:

Հաճախ կարելի յե հանդիպել մարդկանց, վորոնք նոր ձևեր փնտուելով՝ մոռանում են մասսայական աշխատանքի արդեն կիրառված և իրենց արդարացրած ձևերը: Փաստ ե, որինակ, վոր Թիֆլիսի կոմյերիտական կազմակերպությունը, միանգամայն անհասկանալի պատճառներով, աչքաթող ե արել այնպիսի սքանչելի, կենդանի և հետաքրքիր մի ձե, ինչպիսին ե յերիտասարդական քաղորը: Կամ, որինակ, Աղու-

լադ-Մանգլիսի շրջանը — պիոներական քաղորերին — բոլովին թողել ե քաղորերը և այժմ բռնում ե համարյա թե վերջին տեղը Վրաստանի բոլոր շրջաններից՝ մասսայական ազիտացիայի այս հրաշալի ձեմ ոգտագործման տեսակետից:

Մասսայական ազիտացիայի ձեմը շատ կանո Սրանց թվին են պատկանում նաև թեմատիկ մասսավկաները, արշավները, ռեյփերը, մասսայական տոները և այլն: Սակայն այս ձեմըից յուրաքանչյուրի կիրառումը պետք է զուգորդվի մտածված, խորը պատրաստությամբ, «ինչի յես ուզում համելառու գիտակցությամբ»:

Վերջերս ականատես յեղանք մի թեմատիկ մասսավկայի, վոր կազմակերպվել եր բավական լավ մի կուսքիցի կողմից: Յեկ ինչ: Լավ նախաձեռնությունը ըստ եյության տապալվեց, թերեւ բացառապես միայն այն պատճառով, վոր նրա կազմակերպիչներն իրենք չեյին հասկանում, թե ինչու համար, իսկապես, կազմակերպում են մասսովկան: Մարդկանց ստիպում եյին նստել, լսել ճառեր, ապա վիճաբանություններ (թեև վոչ վոք տրամադրված չեր «վիճելու»): Ապա արտասանություններ յեղան մասսովկայի թեմային համապատասխան, հետո բոլորին շարքով տարան նշան խփելու: Բոլորը հերթի կանգնեցին — ծանձրալի յե... բայց կազմակերպված ե և ամեն ինչ տեղն եւ նշան խփելուց հետո բոլորին տարան «վոլեյբոլի»: Միքանիսը խաղում են, մյուսները պետք ե «գիտեն» և «խելամուտ» լինեն: Հետո «թեմատիկ» ճաշ, ապա «մեռյալ ժամ»: Յերգելն արգելեցին, քանի վոր ժամը «մեռյալ» ե: «Մեռյալ ժամից» հետո վերադարձան քաղաք, ճանապարհին յերգում եյին թեմատիկ յեր-

գերու Պուրակի, արհ, ջուր, յերդեր—չողազործեցին:  
«Թէմայի» սպատճառով անհաջողություններ:

Կամ այսպիսի մի դեպք, Մեկնում են մասսով-  
կայի Մցիսեթ: Դնում են յերիտասարդները, ծերերը,  
բանվորների կանայք, յերեխաներ... Սակայն զվար-  
ճությունների «մենյուն» բոլորի համար «ստանդարտ»  
և Հետեանքը՝ ովքեր յերիտասարդ են, «վոլեյբոլ» են  
խաղում, յերդեր են յերգում, վագում են միմյանց  
հետեխց, իսկ ծերերը ձանձրանում են՝ սպասելով վե-  
րադարձի գնացքին: Ի՞նչ կարող են տալ նման մաս-  
սովկաները:

Այս գործին պետք է մոռենալ չափազանց մտած-  
ված կերպով: Պետք է այսպես կազմակերպել մաս-  
սովկան, վոր հետաքրքրի նրա յուրաքանչյուր մաս-  
նակցողին՝ առանց բացառության: Դրա համար պետք  
է նաևաչել մասսովկային մասնակցողին, պետք է  
տանել նախապատրաստական մեծ աշխատանք...Վոմանք  
կարծում են, վոր յեթե նման յուրաքանչյուր նախա-  
ձեռնության նկատմամբ մանրակրկիտ նսիսապատ-  
րաստություն տարվի, առա այդպիսով ամառն ել  
կանցնի, տարին ել, և չես հասցնի յերկու-յերեք  
քաղոր, ժողով կամ մասսովկա անցկացնել: Այդ ճիշտ  
չե: Քաղորի, ժողովի կամ մասսովկայի նախապատ-  
րաստությունը պահանջում է դետալների խորը մտած-  
վածություն, մասսաների պահանջների յեզ ՏՐԱՄԱ-  
ԳՐՈՒՐՅՈՒՆԵՐԻ պարտադիր հաշվառում: Իսկ դա, իր  
հերթին, նշանակում է նախապատրաստման գործում  
ներգրամիել բոլոր կազմակերպությունները, յուրա-  
քանչյուր կոմունիստի, կոմյերիտականի, անկուսակ-  
ցական բանվոր-ակտիվիստի, հարվածայինի:

Վորքան շատ և լավ ներգրավված լինեն լայն  
մասսաները ժողովների, քաղորերի կամ մասսովկաների

նախապատրաստման գործում, այնքան ավելի արագ, լավ և արդյունավետ կանցնեն նրանք:

Սակայն մասսայական ազիտացիայի ձեերից մեկն ոգոագործելիս չպետք է մոռացվի կենտրոնական խնդիրը, գլխավորը՝ նպատակային դրույթը: Իսկ դիսավորը ժամանակակից ետապում այն է, վոր պետք է քաղաքական, բայլենվիլյան ազգեցությամբ, բայլենվիլյան ազիտացիայով ընդգրկել բանվորների ամբողջ մասսան՝ ուղղելով և մորիլիգացիայի յենթարկելով նրա հեղափոխական եներգիան և ստեղծագործական խանդավառությունը կոմունիզմի հաղթանակի համար մղված հետագա պայքարի շուրջը:

Սրանք են, ընդհանուր գծերով, մասսայական աշխատանքի և մասսայական ազիտացիայի խնդիրները բանվորների շրջանում: Յուրաքանչյուր կուսկազմակերպությունից պահանջվում է այժմ լինել մասսաներում աշխատանք տանելու այս կարևոր բնագավառի խսկական կազմակերպիչը, և մասսաներում բայլշենիլյան ազիտացիայի դրվածքի հարցերի շուրջը հրավիրվելիք՝ Թիֆլիսի քաղաքային առաջիկա կոնֆերանսը պետք է խորը և մանրամասն կերպով քննի, բացի այլ հարցերից, բանվորների շրջանում մտասայական ազիտացիայի հարցը:

Կանգ առնենք այժմ խմբական յեվ անհատական ազիտացիայի հարցի վրա: Ձեռնարկություններում կուսակցական աշխատանքի վերակառուցման համար վճռական նշանակություն ունեցավ ՀամԿ(բ)կ կենտկոմի 1931 թ. մարտի 21-ի վորոշումը՝ «կուսակցական և մասսայական աշխատանքի մասին՝ ցեխում և բրիգադում»:

Տվյալ ետապում, յերբ կուսակցությունը խնդիր է դնում քաղաքական ներգործությամբ և բայլշենի-

կյան աղղեցությամբ ընդպրկելու յուրաքանչյուր բանվորի, բանվորների մեջ քաղաքական ազիտացիայի հիմնական ձեր հանդիսանում ե հենց խմբակային և անհատական ազիտացիան:

Զի կարելի անհատական և խմբակային ազիտացիա տանել՝ առանց կուսակցական աշխատանքի կենտրոնը փոխադրելու ստորին ողակ: Կուսմասսայական աշխատանքի ծանրության կենտրոնը ստորին ողակ փոխադրելու գործում կատարված ուժեղ ըեկումը մեծ չափով բարելավեց անհատական և խմբակային ազիտացիայի դրվածքը:

Մինչդեռ միանգամայն սխալ կլիներ պնդել, թե մենք այս գեղքում արդեն հասել ենք բավականաչափ հաջողությունների և վոր արդեն հիմա կարելի յե «հանդչել դափնիների վրա»:

Դժբախտաբար մենք դեռ բավականաչափ ֆարբիկա-դործարանային բջիջներ ունենք, ուր դեռ վոչ բոլոր կոմունիսաներն են հանդիսանում արտադրության առաջատարներ, ուր կոմունիստների մի մասը քաշ ե գալիս անկուսակցական բանվորների հետեւց: Նման բջիջներում, սովորաբար, մասսայական-քաղաքական ազիտացիան, նույնպես խմբական և անհատական ազիտացիան լավ չի դրված:

Բրիգադում, գաղղայինի մոտ աճում են բանվոր գյուտաբարները, հարվածայինների նոր կադրեր, նոր տեխնիկայի հերոսներ, լենինյան կուսակցության, պրոլետարիատի դիկտատուրայի ազիտատորներ:

Ուստի միանգամայն անհանդուրժելի յե, յերբ բրիգադում, անկուսակցական հարվածայինների, արտադրության ենառուզիաստների կողքին դեռևս կան այնպիսի կոմունիստներ, վորոնք հետ են մնում, քաշ են գալիս պոչից:

Ավելորդ ե ասել, վոր նման կոմունիստը չի կարող ագիտատոր լինելու նրան չի լսի հարվածայինը, նրանից որինակ չի կարող վերցնել անկուսակցական բանվորը:

Ծանրության կենտրոնը ստորին ողակ փոխադրելը, առաջին հերթին, նշանակում ե համել այնպիսի դրության, յերբ յուրաքանչյուր կոմունիստ դառնում է խսկական կազմակերպիչ, դեկավար յեվ ագիտատոր:

Համոզել յեվ բարեխականապես լուսավորել առանձին բանվորի կամ բանվորների խմբի՝ կարող ե յեվ պետք ե անի յուրաքանչյուր կոմունիստ:

Դեռևս կուսակցության 13-րդ համագումարն ընդգծեց «անհատական յեվ խմբակային ագիտացիայի յեվ պրոպագանդի գործն ամենալայն կերպով դնելու» անհրաժեշտությունը:

Համագումարը մատնանշեց ագիտատորների հիմնական խնդիրները. «Բանվորների հետ խմբակային և անձնական մասնավոր զրույցներում—ընդմիջումներին, դազգյանի մոտ, ընակարաններում և այլն—այս ընկերները պետք ե ագիտացիա մղեն կուսակցության ոգտին, քաղաքական կարևորագույն դեպքերի առթիվ և բոլոր այն հարցերի շուրջը, վորոնք առավելապես հուզում են բանվորներին»:

Միանգամայն հասկանալի յե, վոր անհատական և խմբակային նման ագիտացիան կարող ե և պետք ե տարվի ցեխում, բրիգադում, մեր յուրաքանչյուր ստորին ողակի, յուրաքանչյուր կոմունիստի կողմից:

Ահա թե ինչու յուրաքանչյուր կուսակմբակի, յուրաքանչյուր կուսկազմակերպչի և բջիջի աշխատանքի վերակառուցման և բարելավման խնդիրն այս ուղղությամբ մնում ե այժմեական:

Զգտել այն բանին, վոր յուրաքանչյուր կոմու-

նիստ բրիգադում, ցեխում լինի կուսակցության խական աղխառասորը, — դա առաջին հերթին նշանակում եւ տանել սխտումատիկ գաստրարակչական մի աշխատանք հենց կոմունիստների մեջ, կոմիել յուրաքանչյուր կոմունիստից գաղափարապես ամուր, քաղաքականապես պատրաստված ազիտատը:

Սակայն յեթե խնդիրը կայանում եւ նըանում, վոր յուրաքանչյուր կոմունիստ լինի կուսակցության աղխառասորը, ապա նշանակմամբ եւ դա արդյոք, թե կուսակցությունը պետք եւ հրաժարվի անհատական և խմբակային աղխառատորների կադրերի ընտրությունից և հատուկ պատրաստությունից:

Առջ չի նշանակում: Բնդիակառակը, հենց նըանամար, վորովեսպի ավելի լավ դրվի անհատական և խմբակային աղխառացիան, անհրաժեշտ եւ ընտրել, հատկապես պատրաստել եւ առաջ քաշել անհատական և խմբակային աղխառատորների կադրեր:

Անհատական և խմբակային աղխառացիայի նշանակությունն աճել եւ առողյա քաղաքական լուսավորության վերաբերմամբ մասսաների առաջադրած պահանջների աճման համեմատ:

Միջազգային բարդացած դրությունը, յերկը ներսում սոցիալիստական շինարարության վիթխարի խնդիրները պահանջում են բարձրացնել մասսաների մեջ աղխառացիայի դրվածքի վորակը, պահանջում են սիստեմատիկ լուսաբանում, բացատրություն յեվ համոզում:

Ահա թե ինչու ներկայումս անհատական և խրմբակային աղխառացիան քաշվում եւ առաջին պլան, առաջնություն եւ ձեռք բերում աղխառացիայի այլ ձեռքի հանդեպ:

Կարիք չկա աղացուցելու, վոր աղխառացիայի վոչ

մի այլ ձեւ չի կարող այդպես սխստեմատիկի, այդպես  
լայն կերպով ընդգրկել մասսաները և ամենից ավելի  
խորը կերպով յերևան հանել նրա կարիքները, պա-  
հանջները և տրամադրությունները, ինչպես անհատա-  
կան և խմբակային ազիտացիան:

Հենց դրա համար ել այժմ ամբողջ հասակով  
ծառանում ե անհատական և խմբակային ազիտացիան  
բարելավելու խնդիրը: Հենց դրա համար այժմս այդ-  
պիսի վճռականությամբ դրվում ե անհատական և  
խմբակային ազիտատորների կաղըերի պատրաստման  
և առաջքաշման հարցը:

Գետք ե ուղղակի ասել, վոր մի ամբողջ շարք  
առանձին կուսկազմակերպություններ, դրանց թվում  
և Բազվում ու Թիֆլիսում, թերագնահատում և ան-  
հատական և խմբակային ազիտացիայի աճող նշանա-  
կությունը: Ընտրելով խմբակային կազմակերպիչ չեն  
զբաղվում անհատական և խմբակային ազիտատորնե-  
րի ընտրությամբ: Ամրացնելով ստորին և միջին կու-  
սակցական ողակը, չեն զբաղվում ազիտկոլեկտիվներ,  
ազիտատորների խմբակներ, կոնսուլտացիայի կետեր  
ստեղծելու հարցով, հաշվի չեն առնում խմբակային և  
անհատական ազիտատորների աշխատանքի փորձը և  
այլն:

Դեռևս ֆաբրիկա-գործարանային կուսկազմակեր-  
պությունների մի մեծ քանակություն չի կարող  
պատմել անհատական և խմբակային ազիտացիայի  
աշխատանքի փորձի մասին, չի կարող ցույց տալ լավ  
և կանոնավոր աշխատող ազիտկոլեկտիվների և ազի-  
տատորների խմբերը:

Նման թերագնահատությունը ծայր աստիճան  
բացասական կերպով ե անդրադասում մասսանե-  
րում տարվող ամբողջ ազիտացիոն աշխատանքի վրա:

Նման թերապնահատության պատճառով բանվորների մեջ տարփող ազխտացիան սովորաբար դառնում է վոչ կոնկրետ, վոչ հրատապ:

Ճիշտ կերպով ընտրել ստորին ազխտատոքներ, հրահանդել նրանց, բարձրացնել նրանց գիտելիքները և գաղափարական մակարդակը ազխտկոլեկտիմեներում կամ համապատասխան խմբակներում ընդունելու միջոցով, սխառեմատիկ կերպով խորհուրդներ տալ (կոնսուլտացիա) ստորին ազխտացիոն ակտիվին, իրազեկ դարձնել նրան ընթացիկ քաղաքականության հիմնական հարցերին, ոգնել նրան՝ ըմբռնելու և պարզելու բանվորներին հուզող ամենասուր հարցերը, — սրանումն է կոյանում յուրաքանչյուր բջիջում և կուսխմբակում խմբակցին և անհատական ազխտատոքների ուժեղ, կոփկած ակտիվ ստեղծելու աշխատանքի խնդիրը:

Բոլոր կուսկազմակերպությունների մոտակա խնդիրն է հանդիսանում խմբակային և անհատական ազխտատոքների անխսիր վերանայումը յեզ ընտրությունը, ազիտկոլեկտիվների, խմբակների յեզ կոնսուլտացիաների ցանցով նրանց պարտադիր ընդուրելումը; Կուսակցական այն բջիջը, կուսխմբակը, վորը մոտ ժամանակում չի ընտրի լավագույն կոմունիստների միջից իր անհատական և խմբակային ազխտատոքները, վատ բջիջ և, վատ և տանում յուրաքանչյուր բանվորի բայլշեկիլյան և քաղաքական ազդեցությամբ ընդունելու աշխատանքը:

\* \* \*

Հաճախ այնպես և լինում, վոր բավականաչափ քաղաքական պատրաստություն չունեցող կոմունիստը խուսափում է պատասխանել «սուր» հարցերին խմբակային և անհատական ազխտատոքների համար

հիմնական պետք ե լինեն յերեք պահանջ—1) բարձրացնել իր պատրաստությունը, իր գաղափարական-քաղաքական մակարդակը, 2) ուշի-ուշով ականջ դնել և ուսումնասիրել մասսաների, խմբերի և առանձին անհատների տրամադրությունները, 3) շարունակ տեղյակ լինել քաղաքական դեպքերին և խմանալ կուսակցության կարևորագույն վորոշումները:

ԻնչՃվ պետք ե ղեկափարզի խմբակային և անհատական ազիտատորը մտասաներուն ազիտացին աշխատանք տանելիս: Ազիտատորը պետք ե հաշվի տոնի խմբի քաղաքական և կուլտուրական մակարդակը կամ առանձին բանվորի բնավորությունն ու մակարդակը, բանվորների տարբեր խմբերի և տարբեր բանվորների (կազրային բանվոր, նոր բանվորներ, կանայք, յերիտասարդներ, աղջային փոքրամասնություններ) հետ պետք ե տանի տարբեր աշխատանք, պետք ե հաշվի տանի կենցաղային առանձնահատկությունները, աղջային մոմենտները և այլն, ազիտացիան տանի վոչ թե ընդհանուրապես, այլ միշտ հիշի, վոր ինքը համոզում ե կենդանի մարդկանց, վորոնք ունեն բազմաթիվ միմյանցից տարբեր գծեր, վորոշ առանձնահատկություններ: Խմանալ առարկան և հարցը, վորի մասին խոսում ես: Խմանալ իր ունկնդիրներին, յուրաքանչյուրին առանձին: Հմանրանալ, չուժվել համոզել տրամաբանորեն, նպատակին դիմել համառ, հաստատ և հետևողական կերպով: Համոզել կապակցված կերպով, պարզ և հասկանալի: Այս բոլորը պիտի սովորեցնել մեր ստորին խմբական և անհատական ազիտատորին, պետք ե ոգնել նրան այս գործում որեցոր, սիստեմատիկ կերպով:

Պետք ե յուրաքանչյուր քիչ թե շատ խոշոր կուսրջիջում (այդ թվում և ցեխային) ստեղծվեն ազիտ-

կոլեկտիվներ կամ աղիտիմբակներ: Պետք է աղիտիկութիմների և աղիտատորների խմբերի ղեկավարը ընտրվեն լիովին պատրաստված ընկերներ, վոչ պահան վորակյալ պըռպագանդիստի մակարդակից: Կուսակցության յուրաքանչյուր կոմիտե պետք է առանձնապես ստուգի և ամբացնի աղիտկոլեկտիվների և աղիտատորների խմբերի ղեկավարների կազմը:

Պետք է վերջ դնել մի շարք տեղերում գոյություն ունեցող այն հայացքին, թե սլրոպագանդիստին պետք է ուշադրությամբ ընտրել, վորովհետեւ կարող ե խճճվել թեորիայի հարցերում, իսկ աղիտկոլեկտիվների ղեկավար կարելի յեւ ընտրել վոչ այնքան խստապահանջ կերպով, վորովհետեւ նա պատրաստում է «միայն» աղիտատորներ: Այս ընկերներն ակներեաբար չեն հասկանում, թե նայած ինչպես ե բայցարում աղիտկոլեկտիվի կամ խմբակի ղեկավարը այս կամ այն յերեւույթը՝ դրանից և կախված, թե աղիտատորը մասսայում ինչպես կրացարի նույն յերեւույթը: Ահա թե ինչու աղիտկոլեկտիվների և խմբակների ղեկավարների ընտրությունը հանդիսանում է միանդամայն պատճախանատու և կարենոր խնդիր:

Անհատական աղիտացիա պետք է տանի յուրաքանչյուր կոմունիստ ամեն տեղ, ուր ել նա գտնվի (բրիդադ, ճաշարան, արամվայ, հանրակացարան, թատրոն, գնացք և այլն): Սակայն այդ չի նշանակում, վոր ըջիջները չպետք ե հատկապես ընտրեն աղիտատորներ «անհատականներ»: Ընդհակառակը, յուրաքանչյուր քջիջ և կուսամբբակ պետք ե ընտրի «անհատների»՝ առանձին բանվորների մեջ աշխատելու համար:

Խմբակային ագիտացիա յեն տանում կուսխմբակի կողմից հատկապես ընտրված խմբակային ագիտանորները։ Խմբակային ագիտատորը պետք ե լինի կուսակցության խսկական անդամ, առավելապես ակտիվ, կայուն, պատրաստված, հեղինակություն ունեցող՝ ընկերների շրջանում։

Խմբակային ագիտատորը չպետք ե կցվի զբուց, այլ անպայման ընտրվի ցեխում, բրիգադում աշխատողներից, կամ հանրակացարանում ապրող կուսանդամներից։ Խմբակային ագիտատորը պետք ե լինի խմբկազմակերպչի ամենամոտ ոգնականը և աշխատինքա անմիջական ղեկավարության տակ։

Խմբակային ագիտատորը պետք ե սիստեմատիկ կերպով ուսումնասիրի բանվորների կազմը, վորոնց մեջ նա աշխատանք ե տանում, պետք ե լինի զգոն, պետք ե յերևան հանի և դիմակազերծ անի բանվորների մեջ խցկված և թշնամական ագիտացիա տանող դասակարգայնորեն անհարազատ տարրերին, պետք ե ողնի մնացյալ բանվորներին (առանձնապես արտադրություն նոր յեկածներին) ըմբռնելու անհասկանալի հարցերը։ Խմբակային և անհատական ագիտատորը՝ բացատրելով արտադրության խնդիրները, կուսակցության լոգունգներն ու վորոշումները՝ պետք ե անշեղ կերպով աշխատի բանվորներին ներգրավելու հարվածայինների շարքը, սոցիալիստական մրցման, հերթափոխական-հանդիպական պլանավորման ծավալման, արդաւեխֆինանսի արմատացման ասպարեզում և այլն։

Բացատրական աշխատանք տանելով բանվորների մեջ՝ խմբակային և անհատական ագիտատորը չպետք ե, սակայն, դառնա համենագետու։ Նախքան իր համար

ել անհասկանալի հարցերին պատասխանելը նա պետք է սպասիչ պատասխան ստանա ազիտկոլեկտիվում, կրնուլուացինն կետում կամ բջիջի քարտուղարի մոտ, և միայն դրանից հետո տա պարզ ու փորոշ պատասխան բանվորներին:

Ամբակային ազիտատորը պետք է կազմակերպի զրույցներ և թերթերի ընթերցումներ, այդ աշխատանքին ներդրավելով դրադարանների աշխատակիցներին, լավ դրագետ կոմիերիտականներին և այլն:

Զրույցները և ընթերցումները պետք են տանել աշխատանքից ազատ ժամերին (մինչև աշխատանքն սկսելը, նախաճաշի, ճաշի ժամանակը տրամվայում, մասսովկայի ժամանակը, ակումբում և այլն): Ազիտատորը պետք է նախաձեռնողը լինի թերթերին, ժուրնալներին բաժանորդագրվելու, բանվորներին գործարանային կամ ակումբային դրադարանումներդրավելու, մասսայական դասախոսություններին դրավելու և այլն:

Յուրաքանչյուր խմբակային ազիտատոր պետք է հաշվի առնի բանվորների պահանջները և տրամադրությունները: Անհրաժեշտ է ազիտատորին վարժեցնել հարցերի հուշատետրում սիստեմատիկ կերպով համառոտ նշանակումներ անելու բանվորների կողմից տըրվող հարցերի մասին, նշանակելու առավելապես արժեքավոր և հետաքրքիր նկատողությունները, յելույթները, կարծիքները, առաջարկությունները և այլն: Բոլորովին պարագագիր չե, վոր այս նշանակումները կատարվեն հենց զրույցի միջոցին: Դա կխանգարի զրույց տանելուն, իսկ յերբեմն կաբող և ճիշտ չհասկացվել զրուցողների կողմից, թե՝ «յես անկեղծորեն արտահայտվեցի, իսկ նա ինձ իսկույն վերցրեց և նշանակեց»:

Բայց կիկայն ազիտացիան իրեն նպատակ չի

[074.]

A 11  
23547

դնում միայն համոզելու բացատրելու հնդ համոզելով և բացատրելով՝ բայլշենիկան առ իրեն նպատակ եւ դնում դիմակագերծ անել, առ կացմել դասակարգային թենամիջներին յեվ նրանց աջակիցներին, պայքար տանել բրակի, պարապուրդի, պրոգուների, պոկողականության, թափթփածության դեմ, գողերի, հասարակական (ացիալիսական) սեփականությունը բալանուների դեմ:

Ազիտատորը պետք է բայլը վիկուրեն դիմակագերծ անի յեվ պայքարի բանվարների միջավայրը թափանցած մանր-բուրծուական գաղափարախոսության, բոլոր տեսակի ու յերանգի ոպորտնիզմի, մեծապեսական ուղինենիզմի յեվ տեղական նացիոնալիզմի արտահայտությունների դեմ յեվ այլն:

\*\*\*

Սրանք են, ընդհանուր գծերով, անհատական և խմբակային ազիտացիայի խնդիրները։ Այս խնդիրների իրագործումը պահանջում է յուրաքանչյուր բջիջից վճռականապես փոխել վերաբերմունքը դեպի այդ աշխատանքը։

Ահա թե ինչու Վե(ր)ե Թիֆլիսի կոմիտեյի նուխաձեռնությունը՝ անցկացնելու շրջանային խորհրդակցություններ և համաքաղաքային կոնֆերենցիաներ ստորին ազիտացիայի հարցերի շուրջը՝ հանդիսանում է բացառապես այժմեական և կարևոր։ Այս կոնֆերենցիան պետք է խթան հանդիսանա ձեռնարկություններում կուսմասայական աշխատանքի հետազա վերելքին։

ԳԱԱ Հմնարար Գիտ. Գրադ.



FL0003409